Գիտե՞ք, որ...

Մեզար կարպետ

Մեզարը նուրբ, բարակ, ոչ խիտ, երկու երեսանի շատ պարզ գործվածք է: Այն համարվում է ամենահասարակ գործվածքը և կիրառվել է լավաշի խմորի գնդերը ծածկելու համար: Սկզբում այն գործվել է խսիրի ձևով և բավականին պարզ եղանակով, սկզբում՝ գետնահոր ոստայնի, մասամբ նաև ցցերի, ապա գորգագործի տորքի վրա: Գործող թելը անցնում էր հենքի թելերի արանքներով՝ առանց դրանց փաթաթվելու, շարք առ շարք: Գործվածքի վրա երևում էին և՛ հենքի թելերը, և՛ գործող թելերը:

Գործող թելերը եղել են տարբեր գույնի, որի շնորհիվ գործվածքն ունեցել է բազմագույն դաշտ: Գործելու ընթացքում հորիզոնական թելից բացի օգտագործվել է նաև նախշի թել, որով գործել են համապատասխան զարդանախշ: Դաշտի մի մասը, հաճախ նաև ամբողջ դաշտը հարդարվել են զարդանախշերով:

Մեզարները առանձնահատուկ են նրանով, որ դրանց հենքաթելերը լինում են գունավոր: Երբեմն կարմիր, կանաչ, կապույտ թելերով հյուսում էին եզրերը, իսկ դաշտը մեծ մասամբ միագույն էր լինում: Օժիտի գունագեղ մեզարները երկու ծայրերից ունենում էին օգտագործված թելերի երկար հյուսքեր, փափուկ փնջեր:

Մեզարը սկզբում եղել է որպես գործվածքի անվանում և կիրառվել է լավաշի խմորի գնդերը ծածկելու համար, հետագայում այդ կտորից կարված գոգնոցը ևս ստացել է մեզար անվանումը: Այդ են վկայում թանգարանային հավաքածուների դիտարկումը և առկա ազգագրական նյութերը: